ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ամփոփելով Արագածոտնի մարզի Թալին համայնքի մասնակցային բյուջետավորման գործընթացով ձևավորված **«Արտենի, Ներքին Բազմաբերդ և Աշնակ բնակավայրերում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում»** ծրագրի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության և ոլորտային պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված դիրքորոշումները, ներկայացրել է իր **դրական եզրակացությունը**:

Այս եզրակացությամբ հիմք է դրվում ծրագրային հայտի հաստատմանը՝ այն ընդգրկելով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստացող ծրագրերի ցանկում:

Ծրագիրը նպատակ ունի բնակավայրերում ստեղծել ժամանակակից և հասանելի մարզական ենթակառուցվածքներ, խթանել առողջ ապրելակերպն ու աջակցել համայնքային ակտիվությանը՝ հատկապես երեխաների և երիտասարդների շրջանում:

Թալինի համայնքապետարան